

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 9/8

17 մայիսի 2016 թ.

Քննարկվեց «Սիմփլի Թեքնոլոջիս» ՍՊԸ գանգատը ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ 29.12.2015թ-ի թիվ 6207436 արձանագրությամբ հաստատված գումարը հետ վերադարձնելու վերաբերյալ:

«Սիմփլի Թեքնոլոջիս» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

«Սիմփլի Թեքնոլոջիս» ՍՊԸ (այսուհետ՝ Ընկերություն) կողմից, 11.12.2015թ-ին ՀՀ ՖՆ Արաբկիրի հարկային տեսչություն է ներկայացվել ավելացված արժեքի հարկի (այսուհետ ԱԱՀ) զրոյական դրույքաչափով հարկվող գործարքների մասով գումարների հաշվանցման և (կամ) վերադարձի դիմում, որի համաձայն Ընկերությունը դիմել է 2.972.063 ՀՀ դրամի ԱԱՀ-ի դեբետային մնացորդի հաշվանցման և (կամ) վերադարձի վերաբերյալ, որից 1.700.000 դրամը, ըստ վերոնշյալ դիմումի, պետք է վերադարձվեր Ընկերության կողմից նշված բանկային հաշվեհամարին:

Համաձայն ՀՀ ՖՆ Արաբկիրի հարկային տեսչության կողմից անցկացված ուսումնասիրության արդյունքում ներկայացված արձանագրության (թիվ 6207436, առ 29.12.2015թ.)՝ Ընկերության ԱԱՀ-ի դեբետային մնացորդից ենթակա է եղել հաշվանցման և (կամ) վերադարձման 2.835.492 դրամ, որից նախանշված 1.700.000 դրամը մինչ օրս չի վերադարձվել Ընկերության կողմից նշված բանկային հաշվին:

Հիմք ընդունելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի գ) կետի և «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի, ինչպես նաև «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի հավելված 1-ի 28-րդ կետի դրույթներն ընկերությունն հայտնում է, որ վերոգրյալի հետ կապված ունի հետևյալ առարկությունը.

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի հավելված 1-ի 11.3 կետում նշված է. «Օրենքով սահմանված կարգով վերադարձման ենթակա հարկի գումարները (բացառությամբ ավելացված արժեքի հարկի գումարների) վերադարձվում են հարկ վճարողին համապատասխան դիմում ներկայացնելու օրվան հաջորդող 30 օրվա ընթացքում՝ Ավելացված արժեքի հարկի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքների մասով վերադարձման ենթակա գումարները վերադարձվում են հարկ վճարողին համապատասխան դիմում ներկայացնելու օրվան հաջորդող 90 օրվա ընթացքում, մինչդեռ Ընկերության կողմից ներկայացված դիմումի օրվանից արդեն անցել է մեկ հարյուր երեսուներկու օր (Ժամկետի հաշվարկը կատարված է համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի իրավական նորմերի):

Ելնելով վերոգրյալից՝ ընկերությունը խնդրում է հասանելիք գումարը հնարավորինս շուտ վերադարձվի:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ «Սիմփլի Թեքնոլոջիս» ՍՊԸ-ի կողմից 11.12.2015թ. էլեկտրոնային եղանակով ներկայացված դիմումի հիման վրա ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ պետի կողմից 2015թ. դեկտեմբերի 17-ին հրապարակվել է թիվ 6207436 հանձնարարագիրը, որի համաձայն 2015թ. դեկտեմբերի 21-ից մինչև 2015թ. դեկտեմբերի 29-ը կատարվել է հարկային հաշվանցումների և (կամ) վերադարձի՝ ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկվող գործարկներից առաջացած դեբետային մնացորդի ուսումնասիրություն: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ 29.12.2015թ-ի թիվ 6207436 արձանագրությունը, որի համաձայն ուսումնասիրվող ժամանակաշրջանում դիմումով պահանջված 2.972.063 դրամ ԱԱՀ-ի դեբետային մնացորդի գումարից «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի և «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի հավելված 1-ի համաձայն՝ ենթակա է սահմանված կարգով հաշվանցման և (կամ) վերադարձման 2.835.492 դրամ:

Քննարկվող դեպքում «Սիմփլի Թեքնոլոջիս» ՍՊԸ-ի 11.12.2015թ. էլեկտրոնային եղանակով ներկայացված ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքների մասով գումարների հաշվանցման և (կամ) վերադարձի դիմումով ընկերությունը խնդրել է հաշվանցման և (կամ) վերադարձման ենթակա գումարից «Պրոկրեդիտբանկ» ՓԲԸ համապատասխան հաշվեհամարին փոխանցել 1.700.000 դրամ, որը, սակայն, մինչ օրս չի փոխանցվել:

Հանձնաժողովը գտնում է, որ ընկերության գանգատով բերված պահանջը՝ ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ 29.12.2015թ-ի թիվ 6207436 արձանագրությամբ հաստատված հաշվանցման և (կամ) վերադարձման ենթակա գումարից 1.700.000 դրամ «Պրոկրեդիտբանկ» ՓԲԸ համապատասխան հաշվեհամարին փոխանցելու վերաբերյալ, հիմնավոր է և ենթակա է կատարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի, «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո Ր Ո Ղ Ո Ւ Մ Է՝

1. «Սիմփլի Թեքնոլոջիս» ՍՊԸ գանգատը բավարարել:
2. ՀՀ ԿԱ ՊԵԿ Արաբկիրի ՀՏ-ին.

ՀՀ ԿԱ ՊԵԿ ստուգումների կազմակերպման և դիտարկման վարչություն ներկայացնել գումարի վերադարձման վերաբերյալ համապատասխան եզրակացություն:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ